

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

(Ստորագրողները գիտում են ուղղակի
Тифлиса. Редакция „Мелк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խւարանչիւր բառին 2 կոպէկ:

ՌԵԴԱԿՏՈՐԱԿՈՒՄԻՏԻՆ

Քաղաքական վերջին անցքերը:—Նախքան տե-
սուած թիւն: «ГОЛОСЪ» լրագրի թղթակցութիւնը: Նա-
մակ խմբագրին Նամակ Ներսիսեան: Նամակ խմբագրին:
Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն:
«Արարատեան» ընկերութիւնը: Թիֆլիսի:—Խա-
ռը լուրեր:—Հայտարարութիւններ:—Տեղեկացոյց:
—Բանասիրական: Մեղուապահութիւն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Նոյնական զորքերը վերջին կարգի
Կարու: Գեներալ Բոբրուս, Լա-
կուր-խան էմիրի հետ մտաւ Աֆ-
գանիստանի մայրաքաղաքը: Այդ-
պիսով աֆգանական երկրորդ պա-
տերազմի զինուորական նպատա-
կին անգլիացիք արդէն հասան,
բայց թէ այդ քաղաքի գրաւելը
ինչ հետեւանքներ կունենայ քա-
ղաքական տեսակէտից նայելով,
զրա մասին լրագիրները զանազան
կարծիքներ են յայտնում: Նոյնա-
ցիք պէտք է պատժեն անգլիական
զեսպանութեան անդամների բռ-
պանողներին և վերականգնեն
Գանդամակի դաշնագրի զօրու-
թիւնը:

«ГОЛОСЪ» լրագիրը այդ մասին
հետեւեալ կարծիքն է յայտնում:

Նոյնական զեսպանութեան
անդամների սպանողներին պատ-
ժելը շատ հեշտ է: Աֆգանական
այն զորքերը, որոնք մասնակցում

էին ապստամբութեանը, անձնա-
տուր չեն եղել անգլիացիներին և
քաղաքից հեռացել են, իս ամ-
բոյնի մէջ գտնել մեղաւորներին
չափազանց դժուար է:

Գանդամակի դաշնագրի զօրու-
թեան վերականգնելը այսպիսի
հանգամանքներում նոյնպէս դը-
ժուար է: Այդ դաշնագրի հա-
մեմատ Աֆգանիստանը պէտք է
Նոյնացի կախումն ունենար ա-
ռանց զինուորական ոյժ գործա-
դրելու, իսկ այժմեան հանգա-
մանքներում էմիրը կարող է եր-
կիր կառավարել միայն անգլիա-
կան զորքերի օգնութեամբ:

Վերջին հեռագիրներից մէկը
յայտնեց և այն, որ Աֆգանիս-
տանի այժմեան էմիր Լակուր-
խանը հրաժարվեցաւ երկիրը կա-
ռավարելուց:

Ֆրանսիական կառավարութիւ-
նը վերջին ժամանակները բաւա-
կան շատ դժուարութիւնների է
պատահում իր ներքին գործերի
վերաբերութեամբ:

Հանրապետական կառավարու-
թիւնը դեռ չէ վերջացրել այն
պատերազմը, որ նա յայտնել է
կղերականներին միմյանս ֆերրի
նոր օրէնքի պատճառով, միւս
կողմից այժմ կառավարութիւնը
պէտք է մաքաւէ անհաշտ հան-
րապետականների դէմ, որոնք բո-
լոր կոմունարների համար պահան-
ջում են կատարեալ ներումն: Այդ

հարցը ներկայ ընդունվում էր կո-
մունարների ներումն ստացա՞ծ
բաժինը վերադարձաւ ֆրանսիա,
այժմ վերադարձվում է թէ հասարա-
կական կարծիքը, թէ ֆրանսիա-
կան մամուլը և թէ կառավարու-
թիւնը: Ընդհանուր ներման հար-
ցը մի քանի անգամ քննվեցաւ
միմյանսների խորհուրդի մէջ և
խրաքանչիւր խորհուրդից մերժ-
վեցաւ, իսկ այն մարդիկ, որոնք
կատարեալ ներումն են պահան-
ջում կոմունարների համար, հետո-
հետեւ աւելի զօրեղանում են և ա-
ւելի շատ կողմնակիցներ են գը-
նում:

Մինչև անգամ «Republique
Française» լրագիրը, որ Գամ-
բետայի օրդան է, նա էլ կատա-
րեալ ներման հարցն է պաշտպա-
նում, պնդելով որ այդպիսով հա-
սարակութիւնը և կառավարու-
թիւնը կազատվի այն յուզմունքից,
որ այդ հարցը պատճառում է:

Այդ հանգամանքը աւելի էլ
դժուարացնում է կառավարու-
թեան դրութիւնը, որովհետեւ կա-
տարեալ ներումն իր լրագրի մի-
ջոցով պաշտպանում է այնպիսի
մի մարդ, որ ամենանշանաւոր
ազդեցութիւն ունի պատգամա-
ւորների ժողովում:

Վ. Տ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵԴԱՍԿԱԶՈՒԹԻՒՆ

Մի թղթակցի բերանից դուրս լուր է քա-
ղաքների, թէ երկրագործութիւնը նահապետական
ձեռով է կատարվում, չեղանապահութիւնը, գինե-
գործութիւնը, այգեգործութիւնը, բոստանչութիւ-
նը, անասնապահութիւնը, պանրեգործութիւնը,
արհեստագործութիւնը, այս բոլորը պայական ա-
ւանդութիւններով են կատարվում:

Այս բոլորը իրաւ է, և ամեն մէկս տեսնում ենք
թող մեր գիւղատնտես դարձ հետի ամբիկացի-
ներին, եւրօպացիներին:

Մեր գիւղացուն հարկաւոր է ամեն ինչ գործ-
նական կերպով ցոյց տալ. նրա վրա չեն ազդի
ձեր քարոզները, ձեր խօսքերը, ձեր յօդուածները:
Նրան հարկաւոր է գիւղատնտեսական ուսում:

Նախ, հարկաւոր չեն բարձրագոյն ձեռնարկները:
Գանք մեր մեղուապահութեանը:

Մենք մեր նահապետների օրերից մինչև հիմա
մեղուապահութեան վրա նայում ենք իբրև մի Աս-
տուծու տուրքի վրա: Եթէ շատ մեղր և ձա-
ղիր ենք ստացել, ուրեմն Աստուած յաջողել է,
իսկ եթէ քիչ ենք ստանում, ասել է Աստուած չէ
կամեցել տալ:

Մենք անհոգ ենք դէպի նրանց պահելը, կերա-
կրելը: Երբ գարունը բացվի, դուրս ենք բերում
նրանց և մեր բոստանի մի անկիւնում դարձում
ենք միմեանց վրա, ինչպէս շինութեան դերաններ:
Նրանց մօտ դնում ենք ձաղկեր հանելու և մեղր
ստանալու ժամանակ: Իսկ միւս ժամանակները
թողնում ենք բնութեանը, չենք հոգում նրանց
բնակարանների վրա, նրանց կերակրելու վրա:

Բայց ամբիկացի մեղուապահը մեղ նման ան-
տարբեր չէ դէպի մեղուները, նա հակում է միշտ
նրանց վրա, կերակրում է, ձմեռը մաքուր և հա-
զատ սենեակներում է պահում, իսկ երբ բաց-
վում է գարունը ամբիկացի մեղուապահը (այն, որը
ունենում է 5000 և աւելի փեթակներ: Տրուբերի
և քնի. ֆիլման, ինչպէս կարդում ենք ռուսաց մի
ամսագրում, ունի 12000 փեթակներ) պայման է
կապում ֆերմիներին, այգեպանների և բոստանի-
ների հետ և նրանց հողի վրա կանգնեցնում է փե-
թակները:

Առհասարակ ամբիկացի մեղուապահը մի օրա-

ւար հողի վրա կանգնեցնում է 50 փեթակներ,
իսկ մենք 10 քառակուսի սաժէնի վրա դարձում
ենք 5—100 և աւելի փեթակներ: Երկրագործը
ստանում է իր հողի վարձ նայելով մեղրի առա-
տութեան և նուազութեան:

Ամբիկացիք իւրաքանչիւր տարի արդիւնաբե-
րում են մօտ 35,000,000 ֆունտ մեղր: Իւրա-
քանչիւր փեթակից միջին թուով տարէնը ստաց-
վում է 50 ֆունտ մեղր:

Փեթակների ձևը զանազան է, բայց զիւստա-
պէս ընդունված է ժերզոնի ձևը թէ Ամբիկա-
յում և թէ Եւրօպայում. վերջին տարիներում
այդ ձևը մօտ է գործել և Ռուսաստանի մի քա-
նի տեղերում, օր. Կովկասեան Ստաւրապոլում,
Տոմսկի նահանգի Կուզնեցկի շրջակայքում 2. Ս. Պե-
տերբուրգեան նահանգ Նովոզուգոմիլի գաւառում
և այլն և այլն: Փեթակը ստուկի ձև է, նրա բար-
ձրութիւնը 1 արշ. 11 վերջ. և լայնութիւնը 9 1/2
վերջ, խորութիւնը 7 վերջ: Գա առհասարակ բա-
ժանված է լինում երկու կամ երեք յարկ, իւրա-
քանչիւր յարկում կամ շինում են 8—10 շրջանակ-
ներ (рамки) կամ միարկիլի և այդ շրջանակների
կամ արկիլների մէջ մեղուները պատրաստում են
մեղր, սկսելով վերի յարկից:

Ամբիկացի մեղուապահը, երբ լցվում են արկ-
իլները մեղրով, նա նրան փոխում է դարձակների
հետ:

Տրուբերի և քնի. մեղուանցի արկիլերի կողքե-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ГОЛОСЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Հայ հասարակութեանը արդէն յայտնի է
Կարսի հայոց վարժարանների փակվելը: Այս
անցքի մանրամասնութիւնքը մենք կար-
դում ենք «ГОЛОСЪ» լրագրի 271 համարում:
Յիշեալ լրագրի Կարսի թղթակցը սեպտեմբեր
19-ից գրում է հետեւեալը.

«Շտապում եմ հաղորդել նահանգապետ
Ֆրանկինի տնօրինութեամբ բոլոր հայոց ու-
սումնարանների անակնկալ փակվելու մանրա-
մասնութիւնքը, որոց մասին ձեզ արդէն մա-
սամբ յայտնի պէտք է լինի «Միջազգային ըն-
կերութեան» հեռագրից:

«Կիրակի, սեպտեմբերի 2-ին, Կարսի մէջ լինե-
լով հայոց եպիսկոպոսը հանդիսաւոր հոգեհան-
գիտ կատարեց զօրապետ Լազարեանի համար:
Հոգեհանգստի կատարելուն ներկայ էին նա-
հանգապետը և տեղական վարչութեան բոլոր
ներկայացուցիչքը, նմանապէս և հայոց ու-
սումնարանների բոլոր աշակերտներն ու աշա-
կերտուհիքը: Հոգեհանգստից յետոյ եպիսկո-
պոսը հոգեհոգանների և բոլոր ներկայ եղող
իշխանութեանց ուղեկցութեամբ, երգեցիկ
մանկանց առաջնորդութեամբ գնաց օրիորդաց
համար նոր շինած ուսումնարանը, որ այնտեղ,
եկեղեցու պարսպի մէջ է գտնվում: Ցնայող ու-
սումնարանը օրհնեցին ու բացին նրան:

«Սակայն նրան չը վիճակվեցաւ երկար գոյու-
թիւն ունենալ: Հէնց միւս օրը, երկրորդ դա-
սի ժամանակ, ուսումնարան մտաւ ոստիկա-
նութեան զինաւորը, պ. Պաշենիս, իր օգ-
նակաւի. պ. Պրոսոպոպովի և մի խումբ ոստի-
կանների ուղեկցութեամբ: Ուսուցչին դիմե-
լով նա հրամայեց անմիջապէս արձակել աշա-
կերտուհիներին, որի վրա ուսուցչը պատա-
խանեց որ դեռ վաղ է, և որ նա կարճակէ
ժամի երկուսին, զբաղմունքները վերջացնելուց
յետոյ: Այն ժամանակ ոստիկանութեան զը-
խաւորը յայտնեց որ «աշակերտներին պէտք

ըր ապակի են, իսկ յատակը և առաստաղը փայ-
տից:

Մեղուները մեղր պատրաստելու սկզբին, ա-
պակիներն ևս մեղրամոտով գոցում են, և այդ ձե-
ռով հանում են վաճառահանելու զանազան քա-
ղաքներ առանց փոփոխութեան, և իւրաքանչիւր
անձն հաւատացած է լինում, որ այդ տեսակ արկ-
իլի մեղրը մաքուր է, խառնուրդ չէ:

Այս տեսակ արկիլերի գործածութիւնը Տրուբերի
և քնի. մեղուանցում այնքան մեծ է, որ նրանք
զրա համար ունեն առանձին տախտակներ կտրե-
լու շոգեշաքժ մեքենաներ: Արանից վաղ ամբիկա-
ցիք զմայր—մեղուան, «թագուհին» բերել էին տա-
լիս խառնուրդ և իւրաքանչիւրը Նիւ—Եօքլում վա-
ճառում էին 800 ռուբլով, բայց այժմ Ամբիկա-
յում կայ մաքրաբիւն տեղական մայր ճանճեր:

Ամբիկական ընկերութիւնը մեծ պրեմիա է
խոստացել նրան, ով կը գտնի մի հնար որ մեղրը
չոր, ինչպէս չաքարն է, հանվի վաճառելու:

Ամբիկացիք առհասարակ մեղուապահութիւնից
օգուտ են քաղում 50%—200% պրոցենտ իրանց
ձախսած փողերի:

Իսկ մեր մեղուապահը կոյր բաղդի աջողու-
թեամբ եթէ մի քանի տարի չանվի, անպատ-
ճառ միւս տարին բոլորովին վնասվում է:

Բազրատ Պիճիկեան

1878 » » » 120
1879 » » » 1960

Ռուսիոյ մէջ Արարատեան ընկերութեան գտած ընդունելութիւնը խիստ քաջայերական է՝ թէ՛ ընկերութեան համար, և թէ՛ մեր Ռուսիայեան ազգայնոց համար, որոց մեր թուրքիստան ազգայնոց ուսումնասիրութեան ու ազգասիրութեան օրինակ կրնայ համարուիլ սա իրողութիւնը թէ վերոյիշեալ 1960 ոսկւոյ գումարին գրեթէ կէսը Ռուսիոյ մէջ գոյացած է, իսկ հազու թէ միւս կէսը թուրքիոյ մէջ գոյացած: Ասկից զատ, տեղեկագիրը կը յայտնէ թէ Հայ ազգն իւր առաջին վարժապետանոցը (ի՛նչ Վան) Տիփլիսի Մըշակ օրագրոյ խմբագրապետ պ. Գ. Արծրունւոյ աշխատութեան կը պարտի:

Արարատեան ընկերութիւն երկու տեսակ սովորական հասոյթով ունի. առաջին՝ ընկերաց ամսագրաբն, և երկրորդ՝ յատուկ նպատակ տուններով հաւաքելի նուէրք: Բայց հաշուեցոյցէն կը տեսնենք թէ երրորդ շրջանին մէջ ընկերաց ամսագրաբնէ միայն 20 ոսկի, այսինքն ընդհանուր եկամտին միայն մէկ հարիւրորդն, և նուիրատուներէ միայն 120 ոսկի, այսինքն ընդհանուր եկամտից գրեթէ միայն մէկ քսաներորդը գոյացած է, յորմէ կը տեսնուի թէ ընկերութեան եկամտից ամենամեծ մասը կամւոր նուէրներէ և արտաքոյ կարգի հասոյթներէ կը բաղկանայ: Ընկերութեան համար այս վիճակն իւր առաւելութիւններն ու փոստերն ունի միանգամայն, բայց ըստ որում կը յուսամք թէ ազգն այսուհետեւ պիտի յաւաքարմի, և ոչ թէ պիտի յետադիմէ, յուսալի է որ Արարատեան ընկերութիւնն ալ ներկայ տարւոյ մէջ անցեալ տարիէն աւելի հասոյթ կունենայ, մանաւանդ մինչդեռ անցեալ տարի նպատակը բաժանորդագրութիւնէն 60,000 գումարէ ընթացելով թղթագրամ կը հաւաքէր, որ փոխանակ 600 ոսկւոյ՝ հազիւ 95 ոսկի կարողութիւն, այս տարի երկրին դրամական վիճակն աւելի կանոնաւոր լինելով՝ և ընկերութիւնը կրնայ դրամական փնտնելէ զերծ լինիլ: Նոյնպէս, յուսալի է որ պատուոյ անդամակցութիւնէն ալ զօր ընկերութիւնը ներկայ տարւոյ փետրվար ամսոյ մէջ սահմանեց իրեն հասոյթի նոր աղբիւր մը, զայ տարի ընկերութիւնն իրական օգուտ մը քաղէ:

Արարատեան ընկերութիւնն այժմ իւր դրամապահ Մեծ. Սերովբէ և Սարգիս Վիւլ պէնիան էջէնտիներուն քով 1000 ոսկի ունի, որուն համար տոկոս կընդունի, և ուրիշ քանի մը մանր մունր հաշիւներէ զատ 700 ոսկւոյ չափ ալ իւր քով ունի, որ նոյնպէս դրամապահին պիտի յանձնուի՝ ըստ կանոնագրի դրամական ապահովութեան:

Արարատեան ընկերութիւնը սովորական 70 անգամ ունի, բայց նուիրատու անգամը հարիւրաւորներով են: Յայտնի է որ ընկերութիւնն իւր սովորական անգամութիւնն ինչ ինչ սեղմանց ենթարկած է:

Գոհութեան արժանի է որ Արարատեան ընկերութիւնն իւր հասոյթներն ազգին համար ամենէն օգտակար կերպիւ գործածելու միջոցները գտած է: Տեղեկագիրն իրաւամբ կը զիտէ թէ Հայաստանի քաղաքներէն աւելի զիւրերուն մէջ ուսում ծաւալելու պէտք կայ, ոչ միայն վան զի զիւրացի քաղաքացիներէն աւելի յետեւ վիճակին մէջ են, այլ և վաւեր զի զիւրերը քաղաքներէն աւելի պէտք ունին կեդրոնին նիւթական և բարոյական օգնութեանն ու առաջնորդութեան:

Վանայ մէջ անցեալ տարւոյ վերջը վարժապետանոց մը հիմնած է, որ այժմ 35 աշակերտ ունի, և յորմէ եւնոյ աշակերտը շրջակայ գիւղերուն մէջ ուսում ծաւալելու պաշտօն պիտի ունենան: Վանայ բազմահայ գիւղերէն Սիւրբ գիւղի մէջ նախակրթարան մ'ունի 1876 նոյեմբեր ամսէն ի վեր, ուր 116 աշակերտը կը յաճախեն, որոց 15-ը իսկական սեռէ են. 1876 նոյեմբերի սկիզբը

Կիւսնեց գիւղի մէջ ալ նախակրթարան մը բացւած է 115 աշակերտով, որն 17 իգական սեռէ: Գատուան գիւղաքաղաքին մէջ ալ ներկայ տարւոյ մարտ 6էն ի վեր նախակրթարան մը բացւած է 80 աշակերտով, որոց 18ն իգական սեռէ: Փորթուղայեան Մկրտիչ էջէնտի, որուն Արարատեան ընկերութեան կողմանէ Վասպուրականի մէջ ըրած ազգասիրական աշխատութիւնքն անժխտելի են, Վասպուրականի Արարատեան վարժարանաց ընդհանուր տեսուչի պաշտօնը կը վարէ՝ իրեն օգնական ունենալով՝ Նաթանեան Մարկոս էջէ: Վարժապետանոցին և նախակրթարանաց մէջ աւանդուելիք ուսմանց տեսակն ու չափը լաւ սահմանուած են. և թէպէտ պահանքն կան, այսու ամենայնիւ ընկերութիւնը կը խոստանայ լրացնել զանոնք՝ երբ իւր դրամական կարողութիւնը ներէ: Սակայն, կրեմք մեք ալ տեղեկագրին հետ, «Ինչ նշանակութիւն կըրնայ ունենայ երեք նախակրթարանաց հաստատութիւնն և քանի մը հարիւր ուսանողաց թիւն, երբ Վասպուրական աշխարհի ընդարձակութիւնն ի միտ առնուի, երբ մասնաւոր որ այս բազմահայ դաւառին հարիւրաւոր գիւղերուն մէջ հազիւ 18 գիւղ կայ որ իրեն եկեղեցւոյն կից վարժարան մ'ունենայ. երբ նորա երկու սեռէ 300,000 էն աւելի Հայ բնակչաց մէջէն հազիւ հինգ հազարին պարզապէս կարգաւ գրելը զիտեալը հաստատուի, և միթէ կարելի՞ է որ այսուհետեւ զանուի Հայ մը որ գիւղային նախակրթարանաց թիւը բազմանայ՝ հասարակութեան աչքը շրջանէ համարի:»

Ընկերութիւնը մինչ իւր աշխատութեանց ասպարէզը ընտրած էր Վասպուրական աշխարհը, Ամեն. Ներսէս Սրբազան պատրիարք հայրն անոր ուշադրութիւնը կը հրաւիրէր ծաւրոսի վրա որ Վասպուրականէն ոչ նուազ բազմահայ և ոչ նուազ լուսաւորութեան կարօտ է:

Արարատեան ընկերութիւնը Ս. Պատրիարք հօր առաջարկութեան կարեւորութիւնն ըմբռնելով ընդունեց, և սկսաւ անոր գործադրութեան միջոցներուն վրայ խորհիլ. վիցամսեայ հետազոտութիւնք համադրեցին զինքը թէ ծաւրոսի մէջ կրթութիւն ծաւալելու համար առ այժմ Զարանձաղի, Գիլի և Զըմէկաճաղի մէջ վարժարաններ հիմնելն անհրաժեշտ էր: Ընկերութեան Գործադիր ժողովը անդամներէն Վասիլեան Պետրոս էջէնտի եւ Կարապետ Երիտասարդն, որուն անձնուիրական ջանքերը շնորհակալութեան արժանի են, քանի մ'ամիս առաջ ծաւրոս ուղևորված է յիշեալ վարժարանաց հաստատութիւնն անձամբ կատարելու համար:

1879—1880 տարւոյ ելմտացոյցն, որ ընկերութեան ելմտական վիճակին հետ բազմապատկազ բաւական ընդարձակ է, կը ներկայացնէ 1186 ոսկւոյ վարկ մը, որ չորրորդ շրջանին ծախուց համար քուէարկեալ է, ինչպէս նաև 70 ոսկւոյ գումար մը, զոր Բարեկրթական ընկերութիւնը կը նուիրէ՝ Վասպուրական Կէմ գիւղին մէջ նախակրթարանի մը հաստատութեան համար: Այս նոր զբաղողէն զատ, ընկերութիւնը ներկայ շրջանին մէջ Վասպուրականի Գործօթ կամ մէկ ուրիշ գիւղին մէջ ալ նախակրթարան մը պիտի բանայ, որով Վասպուրականի Արարատեան զբաղողաց թիւը վեց կը լինի: Ասոնց համար 544 ոսկի տարեկան ծախք որոշուած է, ծաւրոսի մէջ բացուելիք երեք զարկոցաց համար ալ 510 ոսկի, իսկ կեդրոնական ծախուց համար 200 ոսկի:

Տեղեկագիրը կը յայտնէ թէ ընկերութիւնն արական սեռի դաստիարակութեան զբաղած ժամանակ իգական սեռը կրթելու խնդիրը չէ մոռցած: Հայաստանի մարց դաստիարակութիւնն ազգային այնպիսի կենսական խնդիր մ'է, որոյ կարեւորութիւնն ոչ որ կրնայ ժխտուիլ: Արարատեան ընկերութիւնը կը կարծէ թէ իւր ներկայ շրջանին մէջ ազգէն

զանելիք ձեռնառութիւնը պիտի ներէ իրեն այս մասին իւր փափաքն և խորհուրդներն իրացնել:

Այս է ահաւասիկ Արարատեան ընկերութեան Գ. տեղեկագրին ընդհանուր վերջուծութիւնը, զոր անօգուտ չը համարեցինք մեր ընթերցողաց ներկայել: Ինչպէս որ յօդուածիս սկիզբն յայտնեցինք, տոյն ազգօգուտ ընկերութեան մինչև ցարդ գտած քաջակրթութիւնն և մանաւանդ իրական օժանդակութիւնն իւր ստանձնած ծանր և դժուար գործին համար պատասխան չէին: Նրեք տարիէ ի վեր հազիւ չորս զարկոց կարենալ բանալ, երբ քանի մը հարիւր ոսկի կը բաւէ ամբողջ տարի մ'ուսման կաթը ջանքելու հարիւրաւոր հայ տղայոց, որք զուրկ կը գտնուին այդ կենսական սնունդէն, մեծ յառաջագործութիւն մը չէ թէ կը զգամք թէ մեր ազգին վերածնութիւնն ուսմանց և արուեստից շնորհիւ է, եւ թէ փորձով զիտեմք թէ ազգն ժողովուրդ մը քաղաքակիրթ աշխարհէն մէջ տեղ չունի և վաղ կամ անագան կորնչելու դատապարտուած է, եթէ կը զգամք թէ մեր ազգին կրած արեւից մէկ մեծ մասն իւր տղիտուութեան պատճառաւ է, եթէ համոզուած եմք այս ճշմարտութեանց, որք դժբաղդարար անժխտելի են, պէտք է աւելի անձնուիրութեամբ աշխատել մեր զարկոցաց համար, և օգնութիւն չը խնայեմք մեր այն ընկերութեանց, որք այլ և այլ ձևերու և անուններու ներքեւ, մի և նոյն նպատակին, այսինքն ազգին մէջ ուսում ծաւալելու կաշխատին: Անոնց պատահած և պատահելիք դժուարութիւններն ոչ թէ մեզ վհատեցնելու՝ այլ անոնց առաւել յօժանդակութիւն մղելու են: Ուր որ դժուարութիւն չը կայ, չը կրնար ըսուիլ թէ յաջողութիւն գոյացած է կամ պիտի գոյանայ հոն: Հարուստ և աղքատ հաւատարապէս կրնան բաւական դրամ զանել այսպիսի վեմ նպատակաց յատկացնելու, բաւ է որ յօժար կամ ունենան և բաւ է որ ամենա ալ համոզուած լինելով թէ մեր ապագայն միայն մեք պիտի շինեմք: Պէտք է ուրեմն քաջալերել, զարգացնել, ընդարձակել և զօրացնել Արարատեան ընկերութիւնն, որուն պարտական պիտի մնայ ազգին ապագայն: Ահա ընկերութեան պարահանդէսն, որ յառաջիկայ կիրակի զիշեր պիտի կատարի ի Պէտք յիշեմք, և որոյ շքեղութեան ու կանոնաւորութեան համար ջանք և զոհողութիւն խնայուած չէ, կրնայ զեղեցիկ առիթ մը լի նի այն ազնուամիտ ազգայնոց, որք կը փափաքեն իրենց ուսումնասիրութեան և ազգասիրութեան մէկ իրական փորձը տալ, քաջալերելով ընկերութիւն մը, որ այսքան անձնուիրութեամբ և յաջողութեամբ կաշխատի Հայաստանի Հայ ժողովրդեան ապագային համար, և հաստատապէս կը յուսամք, որ այս ջերմ հրաւերը, զոր կը փութամք ուղղել համայն ազգակիրաց անտես չը լինիր և ապարդիւն չը մնար:

(Մասիս)

ԹԻՒՐԻՒՄ

Սթամբուլ լրագիրը կը ծանուցանէ թէ հինգշաբթի օրը մայրաքաղաքս եկած լրոց նայելով, Գիւրգերուն ապստամբութիւնը ծանր կերպարանք մ'առած է: Սեր այս աւուր թուով հրատարակեալ նամակ մը հետաքրքրեական տեղեկութիւններ կուտայ այս գործին նկատմամբ:

Նրիւշաբթի օրը 10 վաշտ հետեակազօր զորակուեցաւ ծրարիզօն, ուստից Նէյս Ապտուլ լաշի ապստամբութիւնը զսպելու պիտի երթան և արդէն ապստամբաց հետ զբաղող Օսմանեան զօրախմբից հետ միանան: ձերիտէի Հափաթի կրէ թէ Սպարապետի զուրդ պէտք եղած կարգադրութիւններն ը-

րած է, որպէս զի ի հարկին 40 վաշտ և և կարենայ զրկել Բրդաշ վաշ:

Չորեքշաբթի առաւօտ, Պայրամի տօնին առթիւ Վեհ. Սուլթանին Մէճիտիէի մրգիկութիւն երթալու համար Նլտղի պալատէն ծանրաբայ ելնելէն առաջ, եւրօպական հաղուստով երիտասարդ անձ մը պալատին շուրջը կեցած զօրաց զիծը ձեղքել և յառաջ անցնիլ ուզեց՝ ըսելով թէ Վեհ. Սուլթանն անցած ժամանակ զինք տեսնել կուզէ: Զինուորներն ընդգիմացան, և երիտասարդն ետ մղեցին. ասոր վրա երիտասարդը լայն դաշոյն մը քաշելով, թուրք սպայ մը և երկու զինուոր մահացու կերպիւ վիրաւորեց: Զօրքերն ալ սուլիմով երիտասարդին վրա յարձակեցան, որ նոյնպէս մահացու կերպիւ վիրաւորեցաւ, և տարակոյս չը կար թէ զօրքերը զինքը հոն պիտի սպանէին՝ եթէ Բերայի կառավարիչը միջամտած չը լինէր, որպէս զի երիտասարդը քննութեան ենթարկի:

Այս անձը բնիկ Կ. Պոլսեցի է՝ ազգաւ Յոյն Կոստանդին Գարայանբուլօ անուն, Ռումանիոյ հպատակ: Պատուաւոր ընտանիքի կը վերաբերի, և կրտսի թէ զաւակաց տէր է եղեր: Նրկար ժամանակէ ի վեր թիթի և խելագարութեան մ'ենթակայ լինելուն պատճառաւ օրերով բացակայ կը գտնուէր տունէն:

Նոյն օրը Կոստանդին Գարայանբուլօ հարցաքննութեան ենթարկեցին Նրտղի պահականոցին մէջ ի ներկայութեան Ռումանիոյ հիւպատոսարանի թարգմանին, և տուած պատասխաններն կը հասցուէր թէ խելքը լաւ վիճակի մէջ չէր: Նրէկ դարձեալ հարցաքննութիւն եղաւ: Ոճիրը կատարած ժամանակ, վրան դաշոյնէ զատ ուրիշ զէնք չը կար: Բերա նստած տունը խուզարկուելով սրնտուկ, մը գտնուեցաւ և Բերայի ոստիկանութեան յանձնուեցաւ:

(Մասիս)

ԻՍԼԱՄԻ ԼՈՒՌԵՐ

Այսօր դարձեալ հեռագիրներն չը ստացանք «Միջազգային ընկերութիւնից», այնպէս որ «Մշակի» ներկայ համարը հրատարակուած ենք առանց հեռագիրների:

Նորերումն լրագիրները հազորդել էին, որ թիւրքաց տէրութիւնը զիտաւորութիւն ունի այսուհետեւ այլ ևս դեսպաններ չը պահէ եւրօպական մայրաքաղաքներում, այլ նրանք փոխանակ միայն գործակալատարներն կամ ազնոսներն պահէ: Նախկին թիւրքաց դեսպան Գարիբուլ, Սաֆֆէտ փաշա, թողեց իր պաշտօնը և թիւրքաց կառավարութիւնը զիտաւորութիւն ունի այլ ևս դեսպան չը նշանակել փարիզում: Գերմանական «Polit. Correspond.» լրագիրը հազորդում է որ Սաֆֆէտ փաշայի տեղ կը նշանակվի փարիզում Ֆօթիադէս փաշա, բայց ոչ թէ դեսպանի պաշտօնով, այլ միայն որպէս դիւլոմատիական հասարակ ներկայացուցիչ, կամ ազնոս:

Անգլիական «Standard» լրագիրը հոկտեմբերի 10-ին հեռագիր է ստացել Կ. Պոլսից, որի մէջ հազորդում են թէ թիւրքաց միլիտարներն մեծ խորհուրդը վճռել է թոյլ տալ զբիտաններին մտնել թիւրքաց զինուորական ծառայութեան մէջ:

«ГОЛОСЪ» լրագրին գրում են ՎԱՐՇԱՎԱՅԻՑ, որ այնտեղ նորերումն բացվել է մի երրորդ արհեստագործական իգական դպրոց: Այդ դպրոցում, բացի ուսումնական կուրսից, աւանդվում են կանանց ձեռագործներ, հաշապահութիւն, նոյնպէս գործնական այգեգործութիւն և պարտիզպանութիւն:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐԱՆԻՆ

ԶԱ.Ք. ԳՐԻԳՈՐԵԱՆՅԻ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՆՃԱՌԱՆՈՅԸ» ստացել է

- 1 Սրբուանձտանց—Թորոս Աղ.ԲԱՐ 1 ր. 25 Գ.
- 2 Ս. Մանգլինեանց Կրճեթ Հո—
Գեղեւն.Ա.ԿԱՆ ՀԵՏԱՋՕՏՈՒԹԻՒՆ 1 ր. —
- 3 ԲԺԻԿ Ա. Բարայեանց ՌԻՍՈՒՄ—
ՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՅԱՆ ՀԱՐՇԵՐ 1 ր. —
- 4 Վ. Բահայթեանց ~ ՔԵՐԱԿԱ—
ՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՀԻԿ ԼԵՋՈՒՒ — 25 Գ.
- 5 Երկաթէ ԴԻՄԱԿՈՎ ՄԱՐԴԸ ԵՒ
ԱԻՏԵՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՈՑ 1 ր. —
- 6 Յ. ՇԻՂՄԵՆԻՆԻ ~ ՀՐԱՍԱՐԱԿՈՒ—
ԹԵԱՆՑ ՀԱՒԱՔՈՒՄՆ Ա. 1 ր. 15 Գ.
- 7 Փարոս 1879 — — — Թ. 1 ր. —

ՆԻՎԿՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԱՆՈՒՆԻՍԷՆԸ խնդրում է այն անձանց, որոնք իրան հետ զբաղվում էին ունեին, այսուհետև իրանց մասնավոր նամակներն ուղղել դեպի Նրեան, ուր նա այս տարի պիտի մնայ ըստուցական պաշտոնով, իսկ պատուէրները լուս առաջնայ թող ուղղեն Ննտրոնական զբաղմանսնայ, ուր ինքը պահպանում է իւր մասնացիութիւնը: Նրեան քաղաքի և նորա շրջականների ռուսուհիւրանների վարչութիւնները գիւրութեան համար, իրանց զբամաւոր պատուէրները կարող են ուղղել նոյնպէս և դեպի պ. Տէր Ղառոդեանը, որը կաշխատի ամենայն արազութեամբ կատարումն տայ նոցա պահանջներին: Յետոյ վճարելու պայմանով գրքեր ցանկացողներ զիմով են ուղարկի զբաղմանսնայ:

3—3

Տաք երեմիակներ (СОСИСКИ) կազմաբով է առանց կազմաբի, ՊիՐԹԻՎԻՆԵՐ, 9 Ժամից առաւօտեան, ճաշ է ընթրիք, ձԱՇԸ 2 կերա- կուրնիք 35 կօպ, ԳԻՆԻ, ԱՐԱՊ, ԳԱՐԵ- ՋՈՐ, ԼԻՄՈՆԱԴ, ԶԼԵՏԵՐԱՆ ԶՈՐ ամենա- էժան քննրով կարելի ստանալ պանդուխում որ քանիում է վրաց ՍԷՄԻՆԱՐԻՅԵԼ Հանդէպ, «Ե- սկսիլի» ընկերութեան կանտօրի տակ, ԱՏԱ- ՄԱՆՍԿԻ փողոցի վրա, Զուբալովի տանը:

2—3

Տրվում է ՎԱՐՁՈՎ, ժբերն յարկում մի բնաւ
կարան ՎՅՑ ՍՆԵՆԱԿԻՑ ԲԱՂՎԱՅԱՅ, իր բոլոր
ՅԱՐՄԱՌՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ: Եթէ ցանկացողներ
կը լինեն երկու ընճԱՆԻՔ բնակվելու, կարելի
է բաժանել երկու մասը, չորս եւ երկու ՍԵ-
ՆԵՆԱԿՆԵՐԻ: Տունը գտնվում է ՆՈՐԱՇԵՆԻ
փողոցում գնի մասին Հարցնել այնտեղ տան
տիրոջ ԻՍԱՀԱԿ ՓՈԻՂԻՆԵՆԱՆՑԻՆ:

2—2

Կենտրոնական Գրափաճառանոցում, Գլխորդին փողոցի վրայ, Արժրուն Գալերէյում,
փաճառփում են հետեւայ նոր զրքերը:

- | | | | | | |
|--|----|---|---|----|----|
| 1. Կարմիր լապտեր, փողբրիկ մանկանց ընթերցանութեան համար, թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած. | գ. | — | » | 50 | կ. |
| 2. — նոյնը առանց կազմի. | | — | » | 30 | կ. |
| 3. Թաւառազ մեղու փողբրիկ մանկանց ընթերցանութեան համար, թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի. պատկերազարդ և կազմած. | | — | » | 40 | կ. |
| 4. Նղբայր և քոյր մանկական վէպ. թարգ. Զ. Մսերեանի պատկերազարդ | | — | » | 30 | կ. |
| 5. Հակոբյան ձեռքեր. մանկական վէպ, թարգ. Զ. Մսերեանի, պատկերազարդ | | — | » | 10 | կ. |
| 6. Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար. | | 1 | » | — | կ. |
| 7. Թորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձոտեանց | | 1 | » | 25 | կ. |
| 8. Նրկունը իններորդ դարու. գործ Մերենցի. | | 1 | » | — | կ. |
| 9. Պատանեկան ներշնչմաներ, գործ. Հրանտ Սաստուրի. | | — | » | 60 | կ. |
| 10. Մի կաթիլ արտոյր, գոր կը Տեղու. Սիսակ հայ մեկրիին վրայ | | — | » | 35 | կ. |
| 11. Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախօսութիւն Ա.Արծրունու. | | — | » | 50 | կ. |
| 12. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բաբայանի | | 1 | » | — | կ. |
| 13. Մարմնակազմական կամ անատոմիական բառարան Լատիներենից և Ռուսերէնից Հայերէն. բժ. Լ. Տիգրանեանցի | | 1 | » | — | կ. |
| 14. Կրօնք. հոգեբանական հետազոտութիւն Ս. Մանգեանեանի | | 1 | » | — | կ. |
| 15. Հայկական թատրոն. Վուլքի իմ վէպեր, փարս երեք պատկերով, գործ. Մ. Տէր Գրիգորեանցի | | — | » | 40 | կ. |
| 16. Բեբեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ, թարգ. Ն. Լալայեանցի | | — | » | 25 | կ. |
| 17. Աշնանային երեկոյ զիւղում, վողբվիլ մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Շահբաղդեանի | | — | » | 25 | կ. |
| 18. Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով, թարգ. Գ. Զմիլկեանի | | — | » | 40 | կ. |
| 19. Ժանս և Ժանէտ օպերա-վողբվիլ, թարգ. Գ. Շահբաղդեանցի մէկ գործողութեամբ | | — | » | 40 | կ. |
| 20. Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, գործ. Գ. Սունդուկեանի | | — | » | 30 | կ. |
| 21. Պատաններ խրատ. վողբվիլ մէկ արարվածով Մ. Տէր Գրիգորեանի | | — | » | 50 | կ. |
- Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասազգրքներ Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուներէ, դասական պետոյքներ ուսումնարաններէ և աշակերտներէ համար, Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և զիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաբաղաքացիք իրանց պահանջները պէտքէ ուղարկեն հետեւեալ հասցեով.
- „Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю“
- 2—10 (2)

2—10 (2)

ԶԻՆԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

**ՆՕՐՎԵԳԻԵՆՅԻ ՄԼՔԻՆԾԻ ՁԻՓԻՑ, որ պատ-
րաստված է Մօսկվայի դեղագործ:**

ԳԻՐՇՅԷԼ ԴՏԻՑ

Գիւլյի ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ
թանգ գները դրդեցին խնձ պարապել նրանց արդիւնադործու-
թեամբ և որովհետև պատիճների պատրաստելը զաղունիք է
և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր
Չիլիից, եւ առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված
պատիճները ֆՐԱՆՍԻԱԿԱՆ (ԳԻԻՕՅԻ) ՊԼՏԻՃ-
ՆԵՐԻՑ 40⁰/₀ էժան:

Յոյս ունենա, որ ուռա բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետեւ նորա առիթ չունեն ուռսաց փողերով պահպանել ԱՐՏՏ-ՍԱՀՄԱՆՆԵԱՆ ԱՐԻՒՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ծախսերու տեղերը, Ուսանողանի բոլոր ղեկատուները և տեղական պահեստները: Պլեսաւոր պահեստները, Սօսկվայում, Լուբեանսկի ղեկատուն Նա. Ի. Գերշէկովի և Բ. Կեյցեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում՝ Յուրինովի և Բոստոմովի ղեկատուն:

21—25

ՀԱՅԵՍՏԱՆԻ 12

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց

ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՌԱՌՈՑ (Հոկտեմբերի 11-ին)	Բ.	Կ.	Հեռուագրի	ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՂԻԿԻ	Փ Օ Ս Ց
Ոսկին (պոլտինսկերայը)	8	15		Թիֆլիսից մինչև Փոթի (ճա- նապարհորդների գնացքը) 9 ժա- մին 21 րոպե առաւօտեան: Մին- չև Միխայիլովօ (խուռն գնաց- քը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպե:	Ամեն տեսակ թէ՛ նամակներ, թէ՛ լրագիրներ և թէ՛ ծանր փոստ ամեն տեղ ուղարկե- լու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7 լոյս կի- րակի օրերը: Նաաւրասկ նա- մակներ մինչև 10 ժամ ա- ռաւօտեան և 3—7 երեկո- յեան:
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1420	—		Թիֆլիսից . . . 9. 21	5. 18
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1245	—		Գօրի . . . 11. 58	9. 43
Վերջինի 5% առաջի փո- խառնվածքի ամր. 100 »	235	—		Միխայիլովօ . . . 1. 29	11. 59
Ներքինի 5% վերջինի	230	—		Ռիմա . . . 6. 47	
Մարտի կուրսը 270—	100	—		Փոթի . . . 9. 40	
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա	9	45			
Վենայի կուրսը արծ. 121 գլ.	100	—			
Կարմիր բարձր	4	80			
Առևտրական բանկի ակ- ցիան 200 մ.	310	—	ԱՆԴՐԿՈՎՎԱՍՏԵԱՆ ՄԱՆ- ԿԱՔԱՐՁԱԿԱՆ ԳՊՐՈՑ		
Փոթի թիֆլիսեան երկա- թուղու ակցիան 125 մ.	—	—	(Վէրայի վրա № 38)		
Շաբաթը բրգիկու	7	30			
» միև տեսակը	7	15			
» շաբաթ առաջ	5	30			
» արաղիկ	5	30			
» մարդ վաճառած	10	—			
Բաժնեկի Երևանու Ա- մերիկայի սերմի	8	—			
Միև տեսակը հին սերմից.	7	40			
Բոլորից թուղի	7	50			
» թարաղամի	4	—			
Ալիբեյ Երազարու	2	20			
» Երևանի	—	—			
Գարին	1	40			
Մոմը բնաճարակի (creap.)	12	40			
Մեծ աքսը Նուրիայի	180	—			
Կախ թեթևը	140	—			
Կոկոնը Նուրիայի (բոժ.)	50	—			
Ֆրիզոնը (առք) Աղու- լիայի	65	—			
Կոֆեն մոկի	26	—			
» լիանի	22	—			
» Մանու ինչի	18	—			

ՎՄԵԱԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
—
—ՋԱՔԱՌԱՍԱՆ. Յ. Ա. Գ. Ա.
Ստացանք ձեր նամակը: Տպա- գրութեան մասին կը պա- տասխանենք:
—ՏՐԱՊԻՋՈՆ. ***.
Նամակը կը ապեղ հետեւեալ համար- ներից մէկի մէջ: Յանկալի կը լինէր, որ ժամանակ առ ժա- մանակ զրէլք պղտոյեղ գոր- ծերի մասին:
—ՍՏՐԱՍԹՈՐԻԳ. Ա. Ա. Նը-
նոր հաւաքութեամբ ստացանք ձեր յօդուածը: Երեքշաբթի օրվանից կը սկսենք տպագրել:
—ՄՕՍԿՎԱ. Հ. Ա. Կուղար-
կենք «Մշակ» ձեր հասցէով:
Պ. Ա. Բա-ի համար «Մշակի» համարները անընդհատ ու- ղարկում էինք: Ուսանողներին ինչ հասցէով ուղարկենք:
—ՍԱԼԻԱՆԻ. Բ. Ա. Ստա-
ցանք յօդուածը. տպագրու- թեան մասին շուտով կը պա- տասխանենք: